

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

____.____. 2018 թվականի N ____ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2018/2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԱՄՊԻՐԱՆՏՈՒՐԱ ՈՒ ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասին և <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2018/2019 ուսումնական տարվա՝

1) ասպիրանտուրա ընդունելության տեղերը՝

ա. պետական կրթաթոշակով, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ, առկա ուսուցմամբ՝ 140 տեղ.

բ. պետական կրթաթոշակով, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ, միջպետական համաձայնագրերով՝ 24 տեղ.

2) Դոկտորանտուրա ընդունելության տեղերը՝ պետական կրթաթոշակով, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ՝ 13 տեղ.

3) առկա ուսուցմամբ ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերի բաշխումը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) Հայաստանի Հանրապետությունում 2018/2019 ուսումնական տարվա ասպիրանտուրայի առկա ուսուցմամբ թափուր մնացած տեղերը բարձրագույն ուսումնական հաստատություններում ու գիտական կազմակերպություններում վերաբաշխում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի, Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների ներկայացրած լրացուցիչ հայտերի՝ իրենց տրամադրված տեղերի շրջանակներում.

2) Հայաստանի Հանրապետությունում 2018/2019 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության առկա ուսուցմամբ պահուստային տեղերի բաշխումը վերապահվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018/2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ
 ԱՄՊԻՐԱՆՏՈՒՐԱ ԵՎ ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

NN ը/կ	Բուիը, գիտական կազմակերպությունը	Գերատեսչական պատկանելությունը	Մասնագիտո ւթյան դասիչը	Մասնագիտությունը	2018/2019 ուս. տարի	
					ասպիրան- տուրա	դոկտորան- տուրա
1	2	3	4	5	6	7
1.	Երևանի պետական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ա.01.05	Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն	1	
			Ա.01.09	Մաթեմատիկական կիրառություններ և մաթեմատիկական տրամաբանություն	1	
			Ա.02.04	Դեֆորմացիոն պինդ մարմնի մեխանիկա	1	
			Ա.04.03	Ռադիոֆիզիկա	1	
			Ա.04.10	Կիսահաղորդիչների ֆիզիկա	1	
			Ա.04.16	Միջուկի, տարրական մասնիկների և տիեզերական ճառագայթների ֆիզիկա	1	
			Ա.04.21	Լազերային ֆիզիկա	1	
			Բ.00.04	Ֆիզիկական քիմիա	1	
			Գ.00.04	Կենսաքիմիա	1	
			Գ.00.08	Կենդանաբանություն, մակաբուծություն, էկոլոգիա	1	
			Ե.13.04	Հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցանցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում	2	
			Ե.27.01	Էլեկտրոնիկա, միկրո- և նանոէլեկտրոնիկա (ՄԻՆՈՓՄԻՍ)	1	
			Է.00.01	Հայոց պատմություն	2	
			Է.00.02	Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ	1	
			Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում	1	
			Ը.00.03	Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում	1	
			Ը.00.06	Միջազգային տնտեսագիտություն	1	
			Ը.00.08	Մաթեմատիկական տնտեսագիտություն	2	
			Ժ.01.01	Հայ դասական գրականություն	1	1
			Ժ.01.02	Նորագույն շրջանի հայ գրականություն. գրականության տեսություն	1	
			Ժ.01.07	Արտասահմանյան գրականություն	1	
			Ժ.02.01	Հայոց լեզու	1	
			Ժ.02.02	Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն /1 տեղը՝ Արցախի Հանրապետություն/	3	
Ժ.02.07	Ռոմանագերմանական լեզուներ (անգլերեն)	1				
ԺԲ.00.02	Հանրային իրավունք	1				

1	2	3	4	5	6	7
			ԺԲ.00.03	Մասնավոր իրավունք	2	
			ԺԲ.00.05	Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք	1	
			ԺԵ.00.01	Դեղագիտություն	1	
			ԺԹ.00.01	Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն	1	1
			ԻԲ.00.01	Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ	1	
			ԻԳ.00.02	Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ	1	
	Ընդամենը				37	2
2.	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ա.01.02	Դիֆերենցիալ հավասարումներ, մաթեմատիկական ֆիզիկա	1	
			Ե.02.01	Մեքենագիտություն	1	
			Ե.02.03	Մեքենաշինական արտադրության տեխնոլոգիաներ և սարքավորումներ	1	
			Ե.05.01	Ավտոմեքենաներ և տրակտորներ	1	
			Ե.09.01	Էլեկտրատեխնիկա, էլեկտրամեխանիկա, էլեկտրատեխնոլոգիաներ	1	
			Ե.12.03	Հեռահաղորդակցական ցանցեր, սարքավորումներ և համակարգեր	1	
			Ե.13.01	Կառավարում, կառավարման համակարգեր և դրանց տարրերը	1	
			Ե.13.02	Ավտոմատացման համակարգեր (1 տեղը ՍԻՆՈՓՍԻՍ)	2	
			Ե.13.03	Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր, ցանցեր, դրանց տարրերը և սարքավորումները	1	
			Ե.13.04	Հաշվողական մեքենաների, համալիրների և ցանցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում	1	
			Ե.14.02	Միջուկային էներգետիկ կայանքներ	1	
			Ե.14.04	Վերականգնվող և այլընտրանքային էներգիայի աղբյուրներով էներգետիկ կայանքներ	1	
			Ե.17.04	Օրգանական նյութերի սինթեզի և վերամշակման տեխնոլոգիա	1	
			Ե.27.01	Էլեկտրոնիկա, միկրո- և նանոէլեկտրոնիկա (1 տեղը՝ ՍԻՆՈՓՍԻՍ)	2	
			Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում	1	
	Ընդամենը				17	
3.	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ը.00.01	Ընդհանուր տնտեսագիտություն	1	
			Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում (գործարար կառավարում, մակրոէկոնոմիկա, միկրոէկոնոմիկա, մարքեթինգ, բնօգտագործման տնտեսագիտություն)	5	
			Ը.00.03	Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում (ֆինանսներ, վիճակագրություն)	2	
	Ընդամենը				8	
4.	Հայաստանի ազգային ագրարային համալսարան	ՀՀ կրթության և գիտության	Ե.18.01	Բուսական և կենդանական ծագում ունեցող մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա	1	

1	2	3	4	5	6	7
		նախարարություն	Ե.20.01	Գյուղատնտեսության արտադրության մեքենայացում և մեքենաներ	1	
			Ե. 23.06	Գեոդեզիա, ներառյալ քարտեզագրությունը և կադաստրը	1	
			Զ. 01.01	Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա	1	
			ԺԶ.00.01	Անասնաբուժություն	1	
			Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում (ագրարային)	1	
			Ը.00.03	Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում	1	
		Ընդամենը			7	
5.	Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Գ.00.04	Կենսաքիմիա	1	
			ԺԴ.00.15	Վիրաբուժություն (սրտային)	1	
		Ընդամենը			2	
6.	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ե.23.01	Շինարարական կոնստրուկցիաներ, շենքեր, կառույցներ, շինարարական նյութեր և շինարարական մեխանիկա	1	1
			Ե.23.03	Շենքերի և կառույցների ճարտարագիտական (էներգետիկ, հիդրավլիկ և այլն) ապահովում	1	
			ԺԸ.00.01	Ճարտարապետություն և ճարտարապետական դիզայն	2	1
		Ընդամենը			4	2
7.	Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ԺԳ.00.02	Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ըստ բնագավառների)	1	2
			ԺԹ.00.03	Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական, խմբային գործնեություն)	1	
		Ընդամենը			2	2
8.	Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ժ.01.07	Արտասահմանյան գրականություն	1	
			Ժ.02.02	Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն	-	1
			ԺԳ.00.02	Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ռուսերեն)	1	
		Ընդամենը			2	1
9.	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ԺԷ.00.03	Կերպարվեստ. դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն	1	
		Ընդամենը			1	
10.	Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ԺԷ.00.01	Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն	1	
		Ընդամենը			1	
11.	Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ԺԷ.00.02	Երաժշտական արվեստ	1	
		Ընդամենը			1	

1	2	3	4	5	6	7
12.	Եվրոպական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ը.00.02 ԺԲ.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտության կառավարում Հանրային իրավունք	1 1	
	Ընդամենը				2	
13.	Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ԺԳ.00.02	Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ֆիզիկական կուլտուրա)	1	
	Ընդամենը				1	
14.	«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Է.00.05 Թ.00.01	Պատմագրություն, աղբյուրագիտություն Փիլիսոփայություն	1 1	
	Ընդամենը				2	
15.	Հայաստանում ֆրանսիական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ը.00.02 ԺԲ.00.03	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում Մասնավոր իրավունք	1 1	
	Ընդամենը				2	
16.	Հայ-ռուսական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ե.12.01 Ե.12.03 Ժ.02.02 ԺԹ.00.01	Ռադիոտեխնիկա, ռադիոհաճախականային սարքավորումներ, համակարգեր, տեխնոլոգիաներ Հեռահաղորդակցական ցանցեր, սարքավորումներ և համակարգեր Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն	1 1 1 2	
	Ընդամենը				5	
17.	Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա	ՀՀ կառավարության աշխատակազմ	Ը.00.02 ԺԲ.00.02 ԺԹ.00.01 ԻԳ.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում Հանրային իրավունք Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ	1 - 1 1	1
	Ընդամենը				3	1
18.	Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ա.04.16	Միջուկի, տարրական մասնիկների և տիեզերական ճառագայթների ֆիզիկա	2	
	Ընդամենը				2	
19.	Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն ՊՈԱԿ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	Զ.01.02	Բուսաբուծություն խաղողագործություն, պտղաբուծություն և բույսերի պաշտպանություն	1	
	Ընդամենը				1	
20.	Էներգետիկայի	ՀՀ էներգետիկ	Ե.14.01	Էներգետիկ համակարգեր, համալիրներ, էլեկտրակայաններ և	1	

1	2	3	4	5	6	7
	գիտահետազոտական ինստիտուտ	ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն		դրանց կառավարումը		
	Ընդամենը				1	
21.	«ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ա.04.20	Լիցքավորված մասնիկների փնջերի ֆիզիկա և արագացուցչային տեխնիկա	1	
	Ընդամենը				1	
22.	Մաթեմատիկայի ինստիտուտ	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	Ա.01.02	Դիֆերենցիալ հավասարումներ, մաթեմատիկական ֆիզիկա	1	
	Մեխանիկայի ինստիտուտ		Ա.02.04	Դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա	1	
	Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ		Ե.13.04	Հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցան- ցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում	1	
			Ե.13.05	Մաթեմատիկական մոդելավորում, թվային մեթոդներ և ծրագրերի համալիրներ	1	
	Բյուրականի աստղադիտարան		Ա.03.02	Աստղաֆիզիկա, ռադիոաստղագիտություն	1	
	Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ		ԻԴ.01.08	Երկրաֆիզիկա, օգտակար հանածոների որոնման մեթոդներ	1	
	Ֆիզիկական հետազո- տությունների ինստիտուտ		Ա.04.21	Լազերային ֆիզիկա	1	
	Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ		Ա.04.07	Կոնդենսացված վիճակի ֆիզիկա	1	
	Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ		Ե.17.01	Անօրգանական նյութերի տեխնոլոգիա	1	
	Երկրաբանական գիտությունների ինստիտուտ		ԻԴ.01.01	Ընդհանուր երկրաբանություն	1	
	Հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ		Գ.00.07	Միկրոբիոլոգիա. կենսատեխնոլոգիա	1	
	Բուսաբանության ինստիտուտ		Գ.00.05	Բուսաբանություն. սնկաբանություն. էկոլոգիա	1	
	«Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ		Գ.00.07	Միկրոբիոլոգիա. կենսատեխնոլոգիա	1	
	Ֆիզիոլոգիայի ինստիտուտ		Գ.00.09	Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա	1	
	Մոլեկուլային և կենսաբանության ինստիտուտ		Գ.00.03	Մոլեկուլային և բջջային կենսաբանություն	1	
	Պատմության ինստիտուտ		Գ.00.15	Գենետիկա	1	
	Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ		Է.00.01	Հայոց պատմություն	1	
Է.00.02		Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ	1			
Ա.04.03		Ռադիոֆիզիկա	1			
Հնագիտության և	Է.00.03	Հնագիտություն	1			

1	2	3	4	5	6	7
	ազգագրության ինստիտուտ					
	Արվեստի ինստիտուտ		ԺԷ.00.02	Երաժշտական արվեստ	1	1
	Տնտեսագիտության ինստիտուտ		ԺԷ.00.03	Կերպարվեստ. դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն	1	
	Լեզվի ինստիտուտ		Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում	1	
	Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ		Ը.00.03	Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում	1	
	Ֆիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ		Ժ.02.01	Հայոց լեզու	1	
	Ֆիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ		Ժ.02.02	Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն	1	
	Ֆիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ		ԺԲ.00.01	Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն	1	1
	Ֆիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ		ԺԲ.00.05	Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարական իրավունք	-	1
	Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ		Է.00.01	Հայոց պատմություն	1	
	Արևելագիտության ինստիտուտ		Է.00.02	Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ	1	
	ԻԿՐԱՆԵՏ- Հայաստանյան կենտրոն		Ա.03.02	Աստղաֆիզիկա, ռադիոաստղագիտություն	1	
	Քիմիական ֆիզիկայի ինստիտուտ		Բ.00.04	Ֆիզիկական քիմիա	1	
	Ընդամենը				31	3
23.	«Բժշկական-սարանական միջազգային հետբուժական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ		Գ.00.02	Կենսաֆիզիկա, կենսաինֆորմատիկա	1	
	Ընդամենը				1	
	Պահուստային տեղեր				6	2
	Ընդհանուր				140	13

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հիմնավորումը

1. Անհրաժեշտությունը.

Նախագիծն ընդունվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

ՀՀ կառավարության աշխատակազմը /ՀՀ պետական կառավարման ակադեմիա/, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը, Արցախի կրթության, գիտության և սպորտի նախարարությունը, Գիտությունների ազգային ակադեմիան, Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները, «Ա.Ի.Ալիխանյանի անվան Ազգային գիտական լաբորատորիա /Երևանի ֆիզիկայի ինստիտուտ/>>, «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ հիմնադրամը, «ՍԻՆՈՓՍԻՍ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ, «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ը ներկայացրել են առկա ուսուցմամբ ասպիրանտական կրթական ծրագրով իրենց հայտերը:

ՀՀ կառավարության աշխատակազմը /ՀՀ պետական կառավարման ակադեմիա/, Գիտությունների ազգային ակադեմիան, Երևանի պետական համալսարանը, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը, Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը ներկայացրել են դոկտորանտական կրթական ծրագրով իրենց հայտերը:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը.

Յուրաքանչյուր տարի, ՀՀ գերատեսչություններից ստացված հայտերի հիման վրա ՀՀ կրթության և գիտության նախարարությունն ըստ մասնագիտությունների, ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացնում ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների պետության կողմից պետական կրթաթոշակով, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ /անվճար/, առկա ուսուցմամբ ասպիրանտական և դոկտորանտական կրթական ծրագրով տեղերը: ՀՀ կառավարությունը ՀՀ սահմանադրական

բարեփոխումներով պայմանավորված, 2018/2019 ուսումնական տարվանից հեռակա ուսուցմամբ ասպիրանտական կրթական ծրագրով տեղերը, ինչպես նաև օրդինատուրայի կրթական ծրագրով տեղերը հաստատելու է առանձին ՀՀ կառավարության որոշումներով:

Նախագծի ընդունումը նպատակ ունի կանոնակարգել ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ընդունելությունը և կարգավորել իրավական դաշտը տվյալ բնագավառում:

4. Կարգավորման նպատակը և բնույթը.

Ասպիրանտական և դոկտորանտական կրթական ծրագրով բարձրագույն ուսումնական հաստատություններին և գիտական կազմակերպություններին ուսումնառության անվճար տեղերի հատկացում:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

ՀՀ կառավարության աշխատակազմ /ՀՀ պետական կառավարման ակադեմիա/, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, Արցախի կրթության, գիտության և սպորտի նախարարություն, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ, «Ա.Ի.Ալիխանյանի անվան Ազգային գիտական լաբորատորիա /Երևանի ֆիզիկայի ինստիտուտ/>>, «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ հիմնադրամներ, «ՍԻՆՈՓՍԻՍ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ, «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամ և Բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ:

6. Ակնկալվող արդյունքը.

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը նախատեսում է 2018/2019 ուսումնական տարվա համար առկա ուսուցմամբ ասպիրանտական կրթական ծրագրով ուսումնառությունը կազմակերպելու նպատակով, ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել 140 տեղ և 13 տեղ դոկտորանտուրայի կրթական ծրագրով:

Տեղեկանք

<<Հայաստանի Հանրապետության 2018/2019 ուսումնական տարվա ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերը և առկա ուսուցմամբ ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերի բաշխումը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման բյուջեների վրա ազդեցության մասին

Որոշման ընդունման կապակցությամբ պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն սպասվում:

Տեղեկանք

<<Հայաստանի Հանրապետության 2018/2019 ուսումնական տարվա ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերը և առկա ուսուցմամբ ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերի բաշխումը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

1. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը չի հակասում միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հայաստանի Հանրապետության 2018/2019 ուսումնական տարվա ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերը և առկա ուսուցմամբ ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերի բաշխումը հաստատելու մասին»

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
<p align="center">ՀՀ ֆինանսների նախարարություն</p> <p align="center">մարտի 5-ի թիվ 01/9-2/3875-18 գրություն</p>	<p>Նախագծի 1-ին կետի 3-րդ ենթակետում՝ ՀՀ պաշտպանության նախարարության համար ինտերնատուրա ընդունելության անվճար տեղերի գծով նշված 28 թիվն անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի ծրագրային ցուցանիշների հաշվարկների հիմքում դրված ընդունելության անվճար տեղերի թվին, այն է՝ 12 տեղ, նկատի ունենալով, որ դրա ավելացումը կհանգեցնի ընթացիկ տարվա պետական բյուջեից լրացուցիչ ծախսերի կատարման անհրաժեշտության՝ 12,1 մլն դրամի չափով:</p>	<p align="center">-:</p>	<p>Ինտերնատուրայի վերաբերյալ դրույթը նախագծից հանվել է, քանի որ հատկացվելու է առանձին որոշմամբ:</p>
<p align="center">ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p> <p align="center">փետրվարի 28-ի թիվ ԱԱ/ԺՍ-3-4/2040-18 գրություն</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>		
<p align="center">ՀՀ առողջապահության նախարարություն</p> <p align="center">փետրվարի 27-ի թիվ ԼԱ/05/2187-18 գրություն</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>		
<p align="center">ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն</p> <p align="center">փետրվարի 27-ի թիվ 03/11.1/1522-18 գրություն</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>		
<p align="center">ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>		

<p>մարտի 2-ի թիվ ԻԱ/ՄԱ/1906-18 գրություն</p> <p>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն</p> <p>փետրվարի 26-ի թիվ 05/15/956-18 գրություն</p> <p>ՀՀ արդարադատության նախարարություն</p> <p>մարտի 30-ի թիվ 01/14/52406-18 գրություն</p> <p>ՀՀ պաշտպանության նախարարություն</p> <p>ապրիլի 18-ի թիվ ՊՆ/510-570 գրություն</p> <p>Հանրային քննարկում</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p> <p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p> <p>Նախագծի 1-ին կետի 3-րդ ենթակետում անհրաժեշտ է ՀՀ պաշտպանության նախարարության համար ինտերնատուրայի ընդունելության տեղերը 12-ի փոխարեն նախատեսել 28 տեղ, քանի որ ընթացիկ ուսումնական տարում ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետն ավարտում են ռազմաբժշկական մասնագիտությամբ թվով 28 կուրսանտ, որոնց համապատասխան պաշտոններում նշանակելու պայման է հանդիսանում ինտերնատուրա ավարտած լինելու հանգամանքը:</p> <p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>	<p>-</p>	<p>Ինտերնատուրայի վերաբերյալ դրույթը նախագծից հանվել է, քանի որ հատկացվելու է առանձին որոշմամբ:</p>
--	---	----------	---